ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

««ՀԱՆԵՇ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 6 ԵՎ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ 394-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով ««Հանեշ Գրուպ» ՍՊԸ դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6 և 9-րդ հոդվածների, ինչպես նաև 394-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. 2025 թվականի ապրիլի 3-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել «Հանեշ Գրուպ» ՍՊԸ (այսուհետ՝ Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Զոհրակ Ապրեսյան) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«(...) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետն այնքանով, որքանով չի բացահայտում «արդարադատության բուն էությունը խաթարող խախտման» հասկացությունը և չափանիշները, ճանաչել Սահմանադրության 1-ին, 61-րդ, 63-րդ, 75-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

(...) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածների այնպիսի մեկնաբանությունը, համաձայն որի՝ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ որպես բողոքը վարույթ ընդունելը մերժելու պատճառաբանություն հղում է կատարում վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանություններին և եզրահանգումներին՝ առանց մատնանշելու, թե որ

պատճառաբանությունների և եզրահանգումների մասին է խոսքը, ճանաչել Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

(...) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածների այնպիսի մեկնաբանությունը, համաձայն որի՝ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ որպես բողոքը վարույթ ընդունելը մերժելու պատճառաբանություն հղում է կատարում վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանություններին և եզրահանգումներին, որոնք չեն վերաբերում վճռաբեկ բողոք ներկայացրած անձի փաստարկներին, ճանաչել Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Դիմողը քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 394-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի առնչությամբ նշում է, որ «արդարադատության բուն էության խաթարում» հասկացությունը, ինչպես նաև դրա բացահայտման չափանիշներն Օրենսգրքով նախատեսված չեն, միաժամանակ այն բացահայտված չէ նաև դատական պրակտիկայում: Նման կարգավորման բացակայությունը նշված եզրույթի և դրա առկայությունը հիմնավորելու եղանակի անորոշություն է ստեղծում, ինչն էականորեն սահմանափակում է Վճռաբեկ դատարանի մատչելիությունն անձանց համար: Ավելին՝ նշված եզրույթի որոշակի չլինելը թույլ չի տալիս տարանջատել արդարադատության բուն էությունը խաթարող իրավունքի նորմի խախտումը՝ նման խաթարման չհանգեցնող իրավունքի նորմի խախտումից:

Միաժամանակ Դիմողը նշում է, որ արդարադատության բուն էությունը խաթարող խախտման հիմքով վճռաբեկ բողոք ներկայացնելիս անձի համար կանխատեսելի չեն այն չափանիշները, որոնցով Վճռաբեկ դատարանը պետք է առաջնորդվի խախտումն արդարադատության բուն էությունը խաթարող գնահատելու համար: Ավելին՝ օրենսդրական ձևակերպումը Վճռաբեկ դատարանին ևս հնարավորություն չի տալիս որոշելու նման խախտմանը բնորոշ հատկանիշները, ինչը ողջամտորեն հանգեցնում է կամայական որոշումների կայացման: Արդյունքում՝ Վճռաբեկ դատարանն ստանում է հնարավորություն՝ առանց հստակ պատճառաբանության մերժելու բողոքի վարույթ ընդունումը՝ խախտման՝ արդարադատության բուն էությունը չխաթարող դիտարկելու հիմքով: Ընդ որում՝ Վճռաբեկ դատարանը չի սահմանում, թե ինչ չափանիշների

հաշվառմամբ եկավ այն եզրահանգման, որ խախտումը չի հանգեցրել արդարադատության բուն էության խաթարման: Ըստ Դիմողի՝ նշվածն անհամատեղելի է արդար դատաքննության սահմանադրական իրավունքի հետ:

Բացի դրանից, Դիմողը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6 և 9-րդ հոդվածների առնչությամբ նշում է, որ Վճռաբեկ դատարանի դատական պրակտիկայում նշված դրույթներին տրված մեկնաբանությունն ակնհայտորեն չի համապատասխանում դատական ակտի պատճառաբանվածության պահանջին: Այն դեպքերում, երբ վճռաբեկ բողոք է ներկայացվել այնպիսի հիմնավորումներով, որոնց վերաքննիչ դատարանն իր որոշմամբ չի անդրադարձել, ապա Վճռաբեկ դատարանը որպես իր որոշման պատճառաբանվածություն ակնհայտորեն չի կարող հղում կատարել նույն գործով վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտին: Նման պայմաններում ստացվում է, որ վճռաբեկ բողոք բերող անձի հիմնավորումները մերժվում են՝ առանց ցույց տալու նման եզրահանգման համար հիմք ծառայած դատողությունների ընթացքը:

Միաժամանակ, Դիմողը նշում է, որ, եթե անգամ վերաքննիչ դատարանն իր որոշմամբ անդրադարձել է բողոքաբերի փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը պետք է նշի, թե վերաքննիչ դատարանի կոնկրետ ո՛ր պատճառաբանություններով և եզրահանգումներով են բողոքաբերի փաստարկները հերքվում: Հակառակ պարագայում կստացվի, որ Վճռաբեկ դատարանի որոշումը հիմնավորվում է վերացական, ընդհանրական նախադասություններով, ինչը նույնն է, եթե նշված ընդհանրական նախադասություններն ընդհանրապես բացակայեին: Հետևաբար՝ այնքանով, որքանով Վճռաբեկ դատարանը չի նշում, թե վերաքննիչ դատարանի ո՛ր պատճառաբանություններով և եզրահանգումներով են հերքվում բողոքաբերի՝ վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկները, չի համապատասխանում դատական ակտի պատճառաբանվածության պահանջին: Նման անորոշ հղմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելը, ըստ էության, նպատակ ունի նման որոշումները ձևական առումով համապատասխանեցնել Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1628 որոշման պահանջներին, սակայն առանց վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների և եզրահանգումների կոնկրետ հղումների՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու

մասին որոշումներում բովանդակային առումով բացակայում է պատճառաբանվածությունը, ինչի արդյունքում չեն պահպանվում ինչպես Սահմանադրության 61 և 63-րդ, այնպես էլ Օրենսգրքի 6 և 9-րդ հոդվածները:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29-րդ հոդվածի պահանջով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ (և հետագայում 13.11.2012թ. ՍԴԱՈ-80, 08.04.2014թ. ՍԴԱՈ-13, 07.04.2015թ. ՍԴԱՈ-19, ինչպես նաև 05.02.2016թ. ՍԴԴԿՈ/1-4, 18.02.2016թ. ՍԴԴԿՈ/1-5, 21.03.2016թ. ՍԴԴԿՈ/1-9, 02.04.2016թ. ՍԴԴԿՈ/1-13 և այլ որոշումներով վերահաստատված) իրավական դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ «(...) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց (...), ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (...) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նորմատիվ իրավական ակտի սահմանադրական կոնկրետ վերահսկողության համար վերոհիշյալ պարտադիր նախապայմանի ամրագրմամբ, ի թիվս այլնի, նպատակ է դրվել Սահմանադրական դատարանում քննության առարկա դարձնել ենթադրյալ սահմանադրականության այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են ոչ թե կոնկրետ գործի փաստական և/կամ իրավական

հանգամանքների գնահատման, այլ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման, սահմանադրական նորմերի վերջնական մեկնաբանության և կիրառման հարցեր:

Ընդ որում՝ Սահմանադրական դատարանի կողմից նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառման իրավաչափության հարցի քննարկման դեպքում Սահմանադրական դատարանը կստանձնի դատական ակտ վերանայող դատական ատյանի գործառույթ, ինչը ոչ միայն չի բխում Սահմանադրության և Սահմանադրական օրենքի կարգավորումներից, այլև փաստացի կվերացնի Սահմանադրական դատարանի և եռաստիճան դատական համակարգում ներառված դատարանների գործառույթների տարանջատումը:

Դիմումի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Դիմողը, ըստ էության, վիճարկում է Վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԵԴ/37811/02/19 քաղաքացիական գործի շրջանակներում կայացված դատական ակտի և վերջինիս գործողությունների իրավաչափությունը, որպիսի հարցի քննությունը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից: Մասնավորապես՝ Օրենսգրքի 6 և 9-րդ հոդվածների առնչությամբ Դիմողը նշում է՝ «(…) այնքանով, որքանով Վճռաբեկ դատարանը չի նշում, թե վերաքննիչ դատարանի որ պատճառաբանություններով և եզրահանգումներով են հերքվում բողոքաբերի՝ վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկները, չի համապատասխանում դատական ակտի պատճառաբանվածության պահանջին»:

Իսկ Օրենսգրքի 394-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ Դիմողի ներկայացրած հիմնավորումները հետևյալն են. «(…) Վճռաբեկ դատարանը ստանում է հնարավորություն՝ առանց հստակ պատճառաբանության մերժելու բողոքի վարույթ ընդունումը՝ խախտման՝ արդարադատության բուն էությունը չխաթարող դիտարկելու հիմքով: Ընդ որում՝ կայացրած որոշումներում վերջինս չի սահմանում, թե ինչ չափանիշների հաշվառմամբ եկավ այն եզրահանգման, որ խախտումը չի հանգեցրել արդարադատության բուն էության խաթարման: Արդարադատության բուն էության խաթարող խախտման հասկացության բացակայությունը ստեղծում է այն գնահատելու հարցում կամայական մոտեցման հնարավորություն, ինչն անհամատեղելի է արդար դատաքննության սահմանադրական իրավունքի հետ»:

Այսպիսով, սույն դիմումով Դիմողի կողմից բարձրացված խնդրո առարկա հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե

վիճարկվող դրույթների սահմանադրականության գնահատում, այլ թիվ ԵԴ/37811/02/19 քաղաքացիական գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանի կողմից կայացված դատական ակտի իրավաչափության ստուգում, ինչը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:

Ամփոփելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողը, ձևականորեն վիճարկելով նորմատիվ իրավական ակտի դրույթների սահմանադրականության հարց, ըստ էության, բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց, ինչը Սահմանադրական դատարանում քննության ենթակա հարց չէ, ուստի՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

««Հանեշ Գրուպ» ՍՊԸ դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6 և 9-րդ հոդվածների, ինչպես նաև 394-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

29 ապրիլի 2025 թվականի
ՍԴԱՈ-65